



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- հոկտեմբերի 2018 թվականի №----Ս
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի №85Ա ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
3-Ի №372Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի և 18-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №85Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0537 լիցենզիայի պայմանների՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել 2547 կՎտ հաշվարկային հզորությամբ «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանը,

արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:».

2) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 2700 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

- 1) հիդրոտուրբին №1՝ F-1100/55, 1100 կՎտ, 2014թ.,
- 2) գեներատոր №1՝ CG2-1100-8-Y3, 1100 կՎտ, 2012թ.,
- 3) հիդրոտուրբին №2՝ F-800/55, 800 կՎտ, 2014թ.,
- 4) գեներատոր №2՝ CG2-800-8-Y3, 800 կՎտ, 2012թ.,
- 5) հիդրոտուրբին №3՝ F-800/55, 800 կՎտ, 2014թ.,
- 6) գեներատոր №3՝ CG2-800-8-Y3, 800 կՎտ, 2012թ.:»:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի մայիսի 31-ի №Օ.ԱԲ.100.11СВ.ESC.2.2696.18 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած չորս միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 3-ի «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի №85Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №372Ա որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 20-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ